ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046, tumanyan.lori@mta.gov.am

N 301
17 մայիս 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգարժան՛ պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 64-Ա որոշումը:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր՝ Լ Ե Վ Ո Ն Զ Ա Վ Ա Ր Յ Ա Ն

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան
098 048 046

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 64-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2018թ. մայիսի 7-ի N 28-Ա որոշումը և քաղաքացի Արշալույս Նասիբյանի կողմից ինքնակամ կառուցված մառանը և սպասարկման ու պահպանման հողամասը ուղղակի վաճառքով գնելու համաձայնությունը՝
որոշում եմ.

1.Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Լորուտ, 2-րդ փողոց թիվ 19 հասցեում գտնվող 206,04քմ մակերեսով մառանը և դրա սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած գյուղատնտեսական արտադրական օբյեկտների 0,02506 հա հողատարածքը /ծածկագիր՝ 06-045—0040-0004/ ուղղակի վաճառքով օտարել Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Լորուտ, 9-րդ փողոց, թիվ 9 տան բնակիչ Արշալույս Նասիբյանին հետևյալ արժեքներով՝
1/Մառանի վաճառքի գինը կազմում է 43268.4 /քառասուներեք հազար երկու հարյուր վաթսունութ դրամ չորս լումա /1քմ-ի արժեքը 210/երկու հարյուր տասը/ ՀՀ դրամ:
2/ Հողամասի վաճառքի գինը կազմում է 24057.6 /քսանչորս հազար հիսունյոթ դրամ վեց լումա /1քմ-ի արժեքը 96/իննսունվեց/ ՀՀ դրամ:
2.Թումանյանի համայնքապետարանի 900265123407 հաշվարկային հաշվին մուծել 43268.4/ քառասուներեք հազար երկու հարյուր վաթսունութ դրամ չորս լում/ՀՀ դրամ, իսկ 900265123274 հաշվարկային հաշվին՝ 24057.6 /քսանչորս հազար հիսունյոթ դրամ վեց լումա/ՀՀ դրամ: Վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
3.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները ընդհանուր 67326,0 /վաթսունյոթ հազար երեք հարյուր քսանվեց / ՀՀ դրամ: 30-օրյա ժամկետում չվճարման դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում կրկին ներկայացնել գրավոր առաջարկություն անշարժ գույքը վարձակալելու վերաբերյալ: Վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն տնօրինել 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 37-րդ կետով սահմանած կարգով:
4.Մառանը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, այն կառուցված չէ ՀայաստանիՀանրապետության«Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ